**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԹԻՎ 1**

**29.06.2023թ. կնքված N «ՉՀ-ԲՄԽԱՇՁԲ-2023/3» գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին**

ք. Չարենցավան «20» 07 2023թ.

Չարենցավանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Հ. Կ. Շահգալդյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Պատվիրատու», մի կողմից, և «ՀԱԶԱՐԱՇԵՆ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Գ. Հակոբյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Կատարող» մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով 29.06.2023թ. կնքված N «ՉՀ-ԲՄԽԱՇՁԲ-2023/3» գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5-րդ, 7.6-րդ կետերը, «ՀԱԶԱՐԱՇԵՆ» ՍՊԸ-ի կողմից 14.07.2023թ.-ին ներկայացրած թիվ 313/04 գրությունը և այն հանգամանքը, որ փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին, կնքեցին սույն համաձայնագիրը հետևալի մասին:

**1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

Կողմերը որոշեցին՝

1.1 29.06.2023թ. կնքված N «ՉՀ-ԲՄԽԱՇՁԲ-2023/3» գնման պայմանագրի թիվ 1 և 2 չափաբաժիններով սահմանված աշխատանքների կատարման ժամկետները երկարաձգել՝ վերջնաժամկետ սահմանելով համապատասխանաբար մինչև 2023 թվականի սեպտեմբերի 12-ը և օգոստոսի 28-ը:

**2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն համաձայնագրում Կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

**3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**«ՊԱՏՎԻՐԱՏՈՒ»**
**Չարենցավանի համայնքապետարան**
**ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1**
**ՀՀ ՖՆ ԳՎ**
**Հ/Հ 900132173015**
**ՀՎՀՀ 03022497**

**Համայնքի ղեկավար՝**
**Հ. Կ. Շահգալդյան**

____________________
**(ստորագրությունը)**
**Կ.Տ**

**«ԿԱՏԱՐՈՂ»**
**«ՀԱԶԱՐԱՇԵՆ» ՍՊԸ**
**ՀՀ, 0014, ք. Երևան, Պ. Սևակի 1**
**«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ**
**Հ/Հ 11500821114211**
**ՀՎՀՀ 01816381**
**էլ. հասցեն hazarashen@mail.ru**
**հեռ. (+37460) 62-35-60**

**Տնօրեն՝ Գ. Հակոբյան**

____________________
**(ստորագրությունը)**
**Կ.Տ**

«ՀԱԶԱՐԱՇԵՆ» 01816381